ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 262 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 110-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջակա-նորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի փետրվարի 10-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնների ընդլայնում» ծրագրի մասին» N 110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կարմեն Թորոսյան Դրախտակի» անհատ ձեռնարկատերի հետ (ՀՎՀՀ՝ 54672522) 2026 թվականի ապրիլի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ձեռքի ու սպասք լվանալու հեղուկ օճառների և ախտահանիչ ու լվացքի գելերի ձեռքբերում՝ 472,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սպարկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ ՀՎՀՀ՝ 00204456) 2026 թվականի ապրիլի 6-ին կնքված պայմանագրում նշված

գործարքը, որով նախատեսվում է տնտեսական ապրանքների ձեռքբերում՝ 713,663 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հիգիեն անդ պերսոնալ կեյր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ ՀՎՀՀ՝ 00915091) 2026 թվականի ապրիլի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ալկոսփրեյների ձեռքբերում՝ 158,659.20 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Ռիզոլյում Բ.Վ.» ընկերության հետ (Resolume B.V., Ձվարդստրատ 16, Նիդերլանդներ) 2026 թվականի ապրիլի 16-ի հաշիվ-ապրանքագրով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է համակարգչային ծրագրի արտոնագրի ձեռքբերում՝ 420 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

06.05.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ